# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2034-Ա « 21 » մայիսի 2025թ.

«ԷՐԵԲՈՒՆԻ» ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածով, աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանը՝

1. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝

1) սույն որոշման հավելվածի համաձայն՝ կազմակերպել և ապահովել «էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենի (այսուհետ՝ Տնօրեն) թափուր պաշտոնն զբաղեցնելու մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման իրականացումը.

2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության օժանդակությամբ ապահովել սույն որոշման հավելվածին համապատասխան, հայտարարության հրապարակումը http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում՝ (www.yerevan.am).

3) ապահովել մրցույթին մասնակցելու համար քաղաքացիներից դիմումների և դիմումին կից ներկայացվող այլ անհրաժեշտ փաստաթղթերի ընդունումը և մրցույթների նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

2. Ընդունել ի գիտություն, որ մրցույթներն անցկացվելու են Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի 1 հասցեում գտնվող վարչական շենքի 5-րդ հարկի խորհրդակցությունների անցկացման N 1 դահլիճում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

4. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված
Երևանի քաղաքապետի
2025թ. մայիսի 21 -ի
հ.2034-Ա որոշման

# Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց
# «ԷՐԵԲՈՒՆԻ» ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՄԱՍԻՆ

| Հ/Հ | Թափուր պաշտոնի անվանումը | Մրցույթ անցկացնելու վայրը, օրը և ժամը | Հայտարարության հրապարակման օրը |
|---|---|---|---|
| 1. | «էրեբունի» պատմահնագի-տական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրեն | ք. Երևան, Արգիշտիի 1<br>27.06.2025թ.<br>ժամը՝ 11:00 | 27.05.2025թ. |

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**